

«ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հավելված

«Վանաձորի Հ. Թումանյանի անվան

պետական համալսարան» հիմնադրամի

ռեկտորի ժամկետային պաշտոնակատարի

4.11.2019 թ. թիվ 110 Լ/Կ հրամանի



ՎԱՆԱԶՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ԵՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ

ԱԶԱԿՅՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ԽՐԱԽՈՒՍԵԼՈՒ ԵՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ

ԿԱՐԳ

Ընդունված է Համալսարանի գիտական խորհրդի կողմից

Արձանագրություն թիվ 10 31.10.2019թ.

Փոփոխվել է՝

Արձանագրություն թիվ 11, 31.03.2022 թ.

Առ 05.04.2022թ. փոփոխություններով

Վանաձոր

2022 թ.

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» (այսուհետ՝ Համալսարան) հիմնադրամի (բացառությամբ ՎՊՀ հենակետային վարժարանի և թուլեջի) աշխատողներին և ուսանողներին համալսարանի կողմից դրամական օգնության և աջակցության հատկացման կարգը և չափերը, աղբյուրները:

*(Փոփոխվել է 31.03.2022թ)*

2. Սույն կարգի իմաստով Համալսարանի աշխատողներ են համարվում դրամական օգնության և աջակցության հատկացման անհրաժեշտության առաջացման պահին գործատուի հետ աշխատանքային հարաբերության մեջ գտնվող անձինք:

3. Սույն կարգի իմաստով ուսանողներ են համարվում դրամական օգնության և աջակցության հատկացման անհրաժեշտության առաջացման պահին Համալսարանում բարձրագույն կրթություն ստացող անձինք:

*(Փոփոխվել է 31.03.2022թ)*

4. Սույն կարգով սահմանված դրամական օգնությունն ու աջակցությունը Համալսարանի աշխատողներին և ուսանողներին տրամադրվում է միանվագ:

*(Հանվել է 5-րդ կետը 31.03.2022թ)*

## II. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ՀԱՏԿԱՅՎՈՂ ԴՐԱՄԱԿԱՆ

### ՕԳՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

5. Դրամական օգնություն ստանալու իրավունքը Համալսարանի աշխատողների համար ծագում է՝

*(Փոփոխվել է 31.03.2022թ)*

5.1 աշխատակցի մահվան դեպքում - 100 (մեկ հարյուր) հազար ՀՀ դրամ՝ աշխատողի ժառանգին:

*(Փոփոխվել է 31.03.2022թ)*

5.2 աշխատակցի ընտանիքի անդամի մահվան դեպքում - 50 (հիսուն) հազար ՀՀ դրամ՝ աշխատողին



(Փոփոխվել է 31.03.2022թ)

5.3 աշխատողի հետ տեղի ունեցած դժբախտ պատահարի կամ այնպիսի հիվանդության դեպքում, որոնց հետևանքով անհրաժեշտ է երկարատև բուժում (անաշխատունակության թերթիկ արևվազն 15 օրվա)- 30 (երեսուն) հազար ՀՀ դրամ:

(Փոփոխվել է 31.03.2022թ)

6. Դրամական օգնություն ստանալու նպատակով Համալսարանի աշխատող(ներ)ը կամ նրանց ժառանգները Համալսարանի ընդհանուր բաժին են ներկայացնում Հավելված 1-ում նշված փաստաթղթերը:

(Փոփոխվել է 31.03.2022թ)

7. Դրամական աջակցություն ստանալու իրավունքը Համալսարանի աշխատողների համար ծագում է՝

(Փոփոխվել է 31.03.2022թ)

7.1 մինչև 14 տարեկան երեխաներ ունեցող աշխատողի համար՝ երեխաների պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ յուրաքանչյուր տարվա հունիսի 01-ին՝ - յուրաքանչյուր երեխայի համար 7 (յոթ) հազար ՀՀ դրամ:

(Փոփոխվել է 31.03.2022թ)

7.2. ամուսնացող աշխատողի համար – 50 (հիսուն) հազար ՀՀ դրամ

(Փոփոխվել է 31.03.2022թ 9.2 կետը հանվել է)

7.3 Համալսարանի աշխատողին, ով ունի Համալսարանում 10 տարուց ավել աշխատանքային ստաժ, 40 տարեկան դառնալու և 40 տարեկանին հաջորդող տասնամյակների ծննդյան տարեթվերի առիթով – 50 (հիսուն) հազար ՀՀ դրամ

(Փոփոխվել է 31.03.2022թ)

7.4 Երեխա ունենալու դեպքում, անկախ այն հանգամանքից՝ երեխա ունեցող ծնողներից մեկը, թե երկուսն են Համալսարանի աշխատող – 50 (հիսուն) հազար ՀՀ դրամ:

(10 և 11 կետերը հանվել են 31.03.2022)



III. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ՀԱՏԿԱՑՎՈՂ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

8. Դրամական օգնություն ստանալու իրավունքը Համալսարանի ուսանողների համար ծագում է՝

8.1 ուսանողի հետ տեղի ունեցած դժբախտ պատահարի կամ այնպիսի հիվանդության դեպքում, որոնց հետևանքով անհրաժեշտ է երկարատև բուժում կամ թանկարժեք դեղորայք - 30 (երեսուն) հազար ՀՀ դրամ՝ համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում:

9. Դրամական աջակցություն տանալու իրավունքը Համալսարանի ուսանողների համար ծագում է՝

9.1 առաջին անգամ ամուսնացող և Համալսարանում սովորող ուսանող զույգի համար - 50 (հիսուն) հազար ՀՀ դրամ:

9.2 ուսանողի կողմից երեխա ունենալու դեպքում, եթե երեխա ունեցող ծնողները Համալսարանում սովորող ուսանողներ են - 50 (հիսուն) հազար ՀՀ դրամ:

(10-րդ կետը հանվել է 31.03.2022թ)

IV. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄԸ ԵՎ ԽՐԱՆՈՒՍՈՒՄԸ

10. Համալսարանի ուսանողներին դրամական պարգևատրում տրվում է՝


10.1 գիտության կամ սպորտի բնագավառում հանրապետական և միջազգային առարկայական օլիմպիադաներում կամ մրցույթներում մրցանակային տեղ շահելու դեպքում- յուրաքանչյուր դեպքում 30 (երեսուն) հազար ՀՀ դրամ:

11. Համալսարանի ուսանողներին դրամական խրախուսում տրվում է՝

11.1 համալսարանական ուսանողական և այլ միջոցառումներին ակտիվորեն մասնակցած, իր գործունեությամբ ուսումնական գործընթացի կազմակերպմանն ու ռազմահայրենասիրական դաստիարակությանը նպաստած յուրաքանչյուր ուսանողին 10 (տասը) հազար ՀՀ դրամ:

11.2 հանրապետական և միջազգային գիտաժողովներին մասնակցած և հոդված տպագրած ուսանողին - 20 (քսան) հազար ՀՀ դրամ:

(13-րդ կետը հանվել է 31.03.2022թ)



**V. ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ, ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՏԿԱՑՄԱՆ ԵՎ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ ՈՒ ԽՐԱՆՈՒՄՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂՆԵՐԸ**

12. Սույն կարգի 5.1 կետով նախատեսված դրամական օգնության հատկացման համար ռեկտորին զեկուցագիր է ներկայացնում մահացած աշխատողի անմիջական ղեկավարը կամ մարդկային ռեսուրսների և հատուկ բաժնի պետը, կարող է դիմում տալ աշխատողի ժառանգը:

13. Սույն կարգի 5.2 և 3.3 կետերով նախատեսված դրամական օգնության, 7.1, 7.2, 7.3, և 7.4 կետերով նախատեսված դրամական աջակցության հատկացման համար ռեկտորին զեկուցագիր է ներկայացնում տվյալ աշխատողը կամ նրա անմիջական ղեկավարը, իսկ եթե աշխատողը ռեկտորն է՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորը:

*(Փոփոխվել է 31.03.2022թ)*

14. Սույն կարգի 10.1 կետով նախատեսված դրամական պարգևատրման, 11.1 և 11.2 կետերով նախատեսված դրամական խրախուսման համար ռեկտորին զեկուցագիր է ներկայացնում այն դեկանը, որի ղեկավարած ֆակուլտետում ուսանողն ուսանում է, կամ ռեկտորին կարող է դիմել ՎՊՀ ուսանողական խորհուրդը:

*(Փոփոխվել է 31.03.2022թ)*

**VI. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԵՎ ԵԶՐԱՓՈՒԿ ԴՐՈՒՑԹՆԵՐ**

15. Կանոնակարգը ուժի մեջ է մտնում Ռեկտորի կողմից հաստատվելուց հետո

16. Սույն կարգը հաստատվում և դրանում փոփոխություններ են կատարվում

Համալսարանի Գիտական խորհրդի կողմից:





1. Համալսարանի աշխատողի մահվան դեպքում դրամական աջակցություն ստանալու նպատակով մահացած աշխատողի ժառանգ(ներ)ը Համալսարանի Ընդհանուր բաժին են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

ա. դիմում՝ ռեկտորին

բ. մահացած աշխատողի հետ արենակցական կամ ընտանեկան կապը հավաստող փաստաթուղթ (անձը հաստատող փաստաթուղթ, ծննդյան, ամուսնության վկայական,

գ. մահացած աշխատողի մահվան վկայական

2. Համալսարանի աշխատողի ընտանիքի անդամի մահվան դեպքում՝

ա. դիմում՝ ռեկտորին

բ. աշխատողի հետ մահացողի արենակցական կամ ընտանեկան կապը հավաստող փաստաթուղթ (անձը հաստատող փաստաթուղթ, ծննդյան, ամուսնության վկայական և այլն)

գ. ընտանիքի մահացած անդամի մահվան վկայականը

3. Դժբախտ պատահարի կամ երկարատև բուժման նպատակով դրամական օգնություն ստանալու համար աշխատողի ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը՝

ա. դիմում՝ ռեկտորին

բ. դժբախտ պատահարի կամ երկարատև բուժում անցնելու կամ թանկարժեք դեղորայք գնելու փաստը հիմնավորող փաստաթուղթ (քաղվածք՝ հիվանդի բժշկական քարտից, էպիկրիզ, անաշխատունակության թերթիկ առնվազն 15 օրվա):